ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Մեծ Մանթաշ, (093)637020 , metsmantash.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈՒՆԻՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթով,
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի 2018 թվականի հունիսի 11-ի արտահերթ նիստի օրակարգը :

Զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա.Գրիգորյան

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշի համայնքում 2018 թվականի մայիսի 10-ից մայիսի 16-ն իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների մասին

Զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա.Գրիգորյան

3.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշի համայնքի վարչական սահմաններում տարածքների սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին :

Զեկուցող՝համայնքիղեկավարԱ.Գրիգորյան

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՖՐՈՒՆԶԻԿ /կողմ/----------

ԳԱԲՈՅԱՆ ԺՈՌԱ /կողմ/----------

ԿՅՈՒՐԵՂՅԱՆ ՍՄԲԱՏ /կողմ/----------

ՉՈԲԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ /կողմ/----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

գյուղ Մեծ Մանթաշ
<<11>> հունիս 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Մեծ Մանթաշ, (093)637020 , metsmantash.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈՒՆԻՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-ԻՑ ՄԱՅԻՍԻ 16-Ն ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2018 թվականի ապրիլի 18-ի թիվ 104-Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշի տեղական ինքնակառավարման մարմինների լիզորությունների նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելու վերաբերյալ , Մեծ Մանթաշ համայնքում 2018 թվականի մայիսի 10-ից մայիսի 16-ն իրականացված վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները վերացնելու մասին,
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Ամբողջությամբ ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատանքային խմբի կողմից Մեծ Մանթաշի համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2018 թվականի մայիսի 21-ի թիվ ԻՄՀ-8 արձանագրությանը՝ կից թիվ 1-6 հավելվածներում նշված խախտումները:
2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2018 թվականի մայիսի 21-ի թիվ ԻՄՀ-8 արձանագրությանը՝ կից թիվ 1-6 հավելվածներում նշված խախտումները վերացնելու վերաբերյալ միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
3.Առաջարկել Մեծ Մանթաշի համայնքի ղեկավար Արկադի Գրիգորյանին՝ միջոցներ ձեռնարկել համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքում արձանագրված խախտումներն ամբողջությամբ և սահմանված ժամկետներում վերացնելու, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ:
4. Որոշման կատարման հսկողությունը դնելՄեծ Մանթաշի համայնքի ղեկավար Արկադի Գրիգորյանի վրա:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՖՐՈՒՆԶԻԿ /կողմ/----------

ԳԱԲՈՅԱՆ ԺՈՌԱ /կողմ/----------

ԿՅՈՒՐԵՂՅԱՆ ՍՄԲԱՏ /կողմ/----------

ՉՈԲԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ /կողմ/----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

գյուղ Մեծ Մանթաշ
<<11>> հունիս 2018թ.

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Մեծ Մանթաշի համայնքի
ավագանու 2018 թվականի հունիսի
11-ի թիվ 22 որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշի համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2018 թվականի մայիսի 21-ի թիվ ԻՄՀ-8 արձանագրությունը՝ կից թիվ թիվ 1-6 հավելվածներով ,ներկայացված խախտումները վերացնելու վերաբերյալ

Միջոցառման բովանդակությունը	Կատարման ժամկետ	Կատարման պատասխանատուն
1	2	3
Տեղական ինքնակառվարման մարմինների պարտադիր լիազորությունների բնագավառ		
1.Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ հարցը քննարկել համապատասխան մարմինների հետ :	մինչև 20 հուլիսի 2018 թվականի	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան
2. ՀՀ կառավարության 2001թ. մայիսի 14-ի N 408 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը հաստատելու հետ միաժամանակ մշակել և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը:	ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում	համայնքի ավագանի, համայնքի ղեկավար Ա.Գրիգորյան
3.Համայնքի հողերի օգտագործման սխեմայի նախագծի վեաբերյալ հարցը քննարկել համապատասխան մասնագետների հետ:	մինչև 20 հուլիսի 2018թվականի	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան
4. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի համաձայն համայնքի ղեկավարը անհատական ակտեր ընդունելուց հետո պարտավոր է երկօրյա ժամկետում այն ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցնել համայնքի ավագանու նստավայրում բոլորի համար տեսանելի տեղում:	մինչև 20 հուլիսի 2018 թվականի	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան
5. Համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայի նախագծի կազմման հարցը քննարկել համապատասխան մասնագետների հետ:	մինչև 20 հուլիսի 2018 թվականի	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան
6.Համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման կազմելուց և այն ավագանու կողմից հաստատվելուց հետո, համայնքի ղեկավարի կողմից որոշում ընդունել անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ:	սխեման կազմելուց և այն ավագանու կողմից հաստատվելուց հետո 10 օրյա ժամկետում	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան

7.Օրենքով սահմանված կարգով ապահովել համայնքի բյուջեի սեփական եկամուտների կատարումը:	մշտապես	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան
8.Տեղական հարկերը ,տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրատել համապատասխան միջոցներ	մշտապես	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան
9.Օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցներ կիրառել տեղական հարկերը,տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ ապահովել հանայնքի բյուջեի եկամուտների ամբողջական հավաքագրումը	մշտապես	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան

Քաղաքաշինության բնագավառ

Միջոցառման բովանդակությունը	կատարման ժամկետ	կատարման պատասխանատուն
1.Համայնքի գլխավոր հատակագծի նախագծի վերաբերյալ հարցը քննարկել համապատասխան մասնագետների հետ	մինչև 20 հուլիսի 2018 թվականի	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան
2.Համայնքի քաղաքաշինակն գոտիավորման նախագծի վերաբերյալ հարցը քննարկել համապատասխան մասնագետների հետ	մինչև 20 հուլիսի 2018 թվականի	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան
3.<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջի կատարումն ապահովելու նպատակով համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակումը համայնքի հնարավորությունների շրջանակում իրագործելի համարվելու վերաբերյալ հարցը քննարկել իրավասու մարմինների հետ:Հարցը իրագործելի համարվելու դեպքում սահմանված կարգով ներառել համայնքի զարգացման հնգամյա ծրագրում:	մինչև 20 հուլիսի 2018 թվականի	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան
4.Մահվան վկայականի հիման վրա կատարել համապատասխան գրանցում թաղումների գերեզմանատեղերի գրանցման մատյանում և քննարկել հուղարկավորության կազմակերպումը ստանձնողին գերեզմանի վկայականի տրամադրման հարցը:	մինչև 20 հուլիսի 2018թվականի	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան
5. Քննարկել համայնքի գործող գերեզմանատան համար գերեզնշմանատան հողերի օգտագործման հատակագծի մշակման և հաստատման հարցը:	մինչև 20 հուլիսի 2018թվականի	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան
6. Քննարկել գերեզմանատան մուտքի մոտ գերեզմանատան հատակագծի տեղադրման հարցը և մուտքի մոտ փակցնել գերեզմանատնից օգտվելու կանոնները:	մինչև 20 հուլիսի 2018 թվականի	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան

Հողօգտագործման բնագավառ

Միջոցառման բովանդակությունը	կատարման ժամկետ	կատարման պատասխանատուն
1.Առաջնորդվել ՏԻՄ օրենքի 102-րդ հոդվածի 1-ին մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի դրույթներով:Համայնքի քաղաքաշինական ծրագրային երկու փաստաթղթերի `համայնքի գլխավոր հատակագծի և քաղաքաշինական գոտիավորման նախագծի ,ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմա կազմելու և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելու	մինչև 20 հուլիսի 2018 թվականի	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան

վերաբերյալ հարցը քննարկել իրավասու մասնագետների հետ:		

Արտակարգ իրավիճակների բնագավառ

Միջոցառման բովանդակությունը	կատարման ժամկետ	կատարման պատասխանատուն
1.ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական ծառայության հետ քննարկել՝ քաղաքացիական պաշտպանության համայնքային ծառայություններ ստեղծելու հարցը:	մինչև 20 հուլիսի 2018թվականի	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան
2. Սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի առկայության դեպքում համայնքի զարգացման ծրագրում ներառել սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ:	մինչև 20 հուլիսի 2018 թվականի	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան

Առողջապահության բնագավառ

Միջոցառման բովանդակությունը	կատարման ժամկետ	կատարման պատասխանատուն
1.Համայնքի վարչական սահմաններում տարածքների սանիտարական մաքրման սխեման համապատասխանեցնել <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>>ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի սանիտարական մաքրման սխեմային ներկայացվող պահանջներին և սխեմայի նախագիծը ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:	մինչև 20 հուլիսի 2018 թվականի	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան
2.Համայնքի բյուջեի հնարավորություններին սահմաններում համայնքի տարածքում տեղադրված կոնտեյներների վրա տեղադրել կափարիչներ և ապահովել կոնտեյներների վրա աղբահանություն իրականացնող ընկերության հասցեի կամ ծածկագրի առկայությունը:	մշտապես	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան
3.ՀՀ ԱՆ 22.12.2009թվականի թիվ 25-Ն հրամանի 18-րդ կետի դրույթով ձեռք բերել և օգտագործել նախատեսված նյութերը:	մշտապես	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան
4.Քննարկել ամռան ամիսներին փողոցների ջրման հարցը:	մինչև 20 հուլիսի 2018 թվականի	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան
5.Ձեռնարկել միջոցներ խմելու ջրի որակը մանրէաբանական ցուցանիշներով համապատասխանեցնել սահմանված նորմերին:	մշտապես	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան
6.Ջրամատակարարման համակարգով տրվող խմելու ջրում պարունակվող ազատ քլորի կոնցենտրացիան համապատասխանեցնել ՀՀ ԱՆ 25.12.2002թ.թիվ 876 հրամանի հավելված 3-ով սահմանված նվազագույն պահանջներին՝ այն է 0.3մգ/լ:	մշտապես	համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան

Համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Մեծ Մանթաշ, (093)637020 , metsmantash.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈՒՆԻՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՄՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավրման մասին>> Հայաստանի հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի և << Աղբահանության և սանիտարական մաքրման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով,

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի վարչական սահմաններում տարածքների սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն հավելվածի :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՖՐՈՒՆԶԻԿ /կողմ/----------

ԳԱԲՈՅԱՆ ԺՈՌԱ /կողմ/----------

ԿՅՈՒՐԵՂՅԱՆ ՍՄԲԱՏ /կողմ/----------

ՉՈԲԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ /կողմ/----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

գյուղ Մեծ Մանթաշ
<<11>> հունիս 2018թ.

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Մեծ Մանթաշի համայնքի
ավագանու 2018 թվականի հունիսի
11-ի թիվ 23 որոշման

ղբամաններ-

Աղբահանության երթուղի-

Համայնքի ղեկավար Ա.Գրիգորյան